

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2017թ. մարտի 7-10-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 48-րդ նստաշրջանին, ինչպես նաև նստաշրջանի ընթացքում կայանալիք Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման հիմնական ուղղությունների և մակրոտնտեսության գծով Կոլեգիայի անդամ-նախարար Տ. Վալովայայի հետ հանդիպմանը,
- ✓ 2017թ. մարտի 13-17-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Առուշանյանը և նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը մասնակցել են ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» խորագրով գիտաժողովին,
- ✓ 2017թ. մարտի 23-24-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Զագրեբում (Խորվաթիա) կայացած «Հանրային կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում «Ֆինանսական կառավարում և հսկողություն» թեմայով ուսուցողական այցին,
- ✓ 2017թ. մարտի 27-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո կազմակերպված «Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարումը և ռազմավարությունը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2017թ. ապրիլի 3-7-ը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում սպառողական ապրանք (ծառայություն) – ներկայացուցիչների ցանկի քննարկման և համաձայնեցման նպատակով կազմակերպված աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2017թ. ապրիլի 3-7-ը ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 2020թ. համաշխարհային ծրագրի քննարկումներ» խորագրով միջազգային սեմինարին,
- ✓ 2017թ. ապրիլի 10-12-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության գծով Փորձագիտական հանդիպմանը և 2017թ. ապրիլի 12-13-ը՝ Կայուն զարգացման նպատակների համար Աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2017թ. ապրիլի 25-27-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամրոյանը և տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Դ. Անանյանը մասնակցել են ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Նոր տեխնոլոգիաների կիրառումը վիճակագրական տվյալների հավաքագրման համար» խորագրով դասընթացին:

Առաքելություններ

- ✓ 2017թ. մարտի 20-24-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) փորձագետ Վալենտին Տոդորովը ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում «R ծրագրային ապահովումը տվյալների մշակման և վերլուծության համար» խորագրով դասընթաց անցկացնելու նպատակով,
- ✓ 2017թ. մարտի 27-30-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրության ծառայության (ISTAT) փորձագետներ Ստեֆանո Տերսինյին և Սիմոնա Ռամբերտին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. ապրիլի 3-7-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության փորձագետ Յարլ Քուիթզաուն և Ֆինլանդիայի վիճակագրության ծառայության փորձագետ Վելի-Մաթթի Տյորմելետոն «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աղքատության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2017թ. ապրիլի 17-18-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) փորձագետներ Նիկոլաս Ստուդերը և Ռոզալիա Վազքեզ-Ալվարեսը ԱՄԿ «Աշխատավարձի գլոբալ հաշվետվություն 2016/17» զեկույցի ներկայացման և աշխատավարձի վիճակագրության վերաբերյալ հարցերի քննարկման նպատակով,
- ✓ 2017թ. ապրիլի 25-28-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ֆինլանդիայի վիճակագրության ծառայության փորձագետ Մերվի Նիեմին և Լիտվայի վիճակագրության ծառայության փորձագետ Գեդեմինաս Սամուոլիսը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ինովացիոն վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2017թ. մարտի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը և ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կայուն զարգացման 2030 օրակարգը. Հայաստանում ԿԶՆ-ների ազգայնացմանն ընդառաջ» խորագրով աշխատանքային նիստին,
- ✓ 2017թ. մարտի 9-ին ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանանդյանը և մարտի 10-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ներդրումային ծրագրերում ստեղծվող աշխատատեղերի հաշվարկումը» և «Ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման աշխատանքների մոնիթորինգի և գնահատման չափորոշիչները» խորագրերով աշխատանքային քննարկումներին,
- ✓ 2017թ. մարտի 13-ից ապրիլի 14-ը ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Օհանջանովը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ազգային հաշիվների համակարգ» 11-րդ բազային մակարդակի առցանց դասընթացին,
- ✓ 2017թ. մարտի 15-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Ներառական և կայուն աճ՝ Հայաստանում աղքատության հաղթահարման և ընդհանուր բարեկեցության գծով. Չորս առաջարկ՝ մարտահրավերներ հնարավորությունների վերլուծելու առումով» խորագրով քննարկմանը,

- ✓ 2017թ. մարտի 16-18-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Հանքավանում կայացած «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակում «Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի (Փոխցանց) «Երեխայի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի գերակայությունները միջնաժամկետ հատվածում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2017թ. մարտի 16-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ուլուբաբյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2017թ. մարտի 17-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կանխատեսում» ուղղությամբ ագրո-արդյունաբերական համալիրի գծով խորհրդատվական կոմիտեի աշխատանքային խմբի նիստին,

- ✓ 2017թ. մարտի 20-24-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը և առաջատար մասնագետ Ա. Շաբոյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի առաջին կարգի մասնագետներ Տ. Ավետիսյանը և Վ. Մատչկալյանը, նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Մ. Չապանյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ք. Սիմոնյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը, առաջին կարգի մասնագետ Ա. Ղուկասյանը և վիճակագիր Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում «Թ ծրագրային ապահովումը տվյալների մշակման և վերլուծության համար» թեմայով դասընթացին,
- ✓ 2017թ. մարտի 21-ին ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության գլխավոր մասնագետներ Ա. Ալոյանը և Գ. Ղազարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Արտաքին աուդիտի հաշվետվությունների ձևի և կառուցվածքի վերաբերյալ վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2017թ. մարտի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Նշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած GCP/ARM/006/EC – Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ծրագրի շրջանակում (ԵՀԳԳԶԾ/ENPARD) «Թեմատիկ ոլորտների ընտրությունը և այդ ոլորտների խորքային վերլուծական ուսումնասիրությունների իրականացումը» խորագրով աշխատաժողովին,

- ✓ 2017թ. մարտի 24-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ս. Հովսեփյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ քննարկումներին,
- ✓ 2017թ. մարտի 27-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կանխատեսում» ուղղությամբ ագրոարդյունաբերական համալիրի գծով Խորհրդատվական կոմիտեի աշխատանքային խմբի հերթական նիստին,
- ✓ 2017թ. մարտի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համանախագահությամբ Գենդերային թեմատիկ խմբի անդամների հանդիպմանը,
- ✓ 2017թ. մարտի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի 10-րդ նիստին,

- ✓ 2017թ. մարտի 31-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) կարգավորման օրենսդրության տեսության և միջազգային փորձի ներկայացում» խորագրով սեմինարին,
- ✓ 2017թ. մարտի 31-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի քննարկմանը,
- ✓ 2017թ. ապրիլի 5-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստան /ՅՈՒՆԵՊ գործընկերություն՝ Հայաստանում քիմիական նյութերի վերաբերյալ օրենսդրության մշակման և արդյունաբերության ներգրավման ոլորտում» ծրագրի ներածական սեմինարին,
- ✓ 2017թ. ապրիլի 11-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Սոցիալական պաշտպանության համակարգերի և պարենային անվտանգության փոխկապակցվածությունը Հայաստանում» ոլորտային հետազոտության նախնական արդյունքների քննարկմանը,
- ✓ 2017թ. ապրիլի 21-23-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի մշակման նպատակով աշխատանքային քննարկումներին,

- ✓ 2017թ. ապրիլի 26-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի «Երեխայի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի՝ փաստերի վրա հիմնված նախաձեռնությունները 2015-2017թթ.» խորագրով ամփոփիչ համաժողովին,

- ✓ 2017թ. ապրիլի 26-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Գ. Անանյանը, Ա. Սաֆյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը, առաջատար մասնագետ Վ. Ճաղարյանը, առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Նշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառմանը» ծրագրի ավարտական գնահատման արդյունքների ներկայացմանը,

- ✓ 2017թ. ապրիլի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կայուն Զարգացման Նպատակների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի «Էկոլոգիական» աշխատանքային խմբի առաջին աշխատանքային նիստին,

- ✓ 2017թ. ապրիլի 27-29-ը ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանադյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) Հանրային ֆինանսների կառավարումը Հարավային Կովկասում ծրագրի շրջանակներում համակարգահեն մոտեցմամբ աուդիտի իրականացման մշակված և փորձարկված ձեռնարկի հիման վրա «Համակարգահեն մոտեցմամբ աուդիտի իրականացում» խորագրով վերապատրաստման դասընթացին: